



Վարձակալության Պայմանագիր

ՀՀ ք. Երևան Երկու հազար տասնինը թվականի հունիսի յոթին

„ՀԱՅՁՐԱՆԱԳԻՇ ԻՆՍՏԻՏՈՒՏ,, ՓԲԸ-ն (գրանցման համար՝ 264.120.06268, տրված 30/04/2003թ., գտնվելու վայրը՝ ք.Երևան, Վ.Վաղարշյան 12), ի դեմս՝ տնօրեն **ԱՐՇԱՎԻՐ ՄԱՐՏԻԿՅԱՆԻ**, ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, ում անունից համաձայն 06/06/2019թ.-ին տրված թիվ 20/19 լիազորագրի, հանդես է գալիս **ՍՈՒՐԵՆ ԷՂՎԱՐԴԻ ՂԱԶԱՐՅԱՆԸ** (ծնված՝ 23/05/1985թ.-ին, ՀԾՀ՝ 3905850478, անձնագրային տվյալներ՝ AP0611734, տրված 001-ի կողմից, 31/10/2016թ.-ին, հաշվառված՝ ՀՀ, Կոտայքի մարզ, Մրգաշեն 6-րդ փ., 60 տուն հասցեում), այսուհետ՝ Վարձատու, մի կողմից, և **ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ**, ի դեմս՝ Ծառայության գլխավոր քարտուղար **ՎԱՆԻԿ ԲԱԲԱՅԱՆՅԱՆԻ**, ում անունից համաձայն 31/05/2019թ.-ին տրված թիվ 02/12-1/12493-2019 լիազորագրի, հանդես է գալիս Ծառայության Արաբկիրի բաժնի պետ **ԱՍՅԱ ԱՇՈՏԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԸ**, ծնված՝ 21/11/1972թ.-ին, ՀԾՀ՝ 7111720067, անձնագրային տվյալներ՝ AN0247051, տրված՝ 013-ի կողմից, 07/11/2012թ.-ին, հաշվառված՝ ԵՐԵՎԱՆ, ԴՎՎԹԱՇԵՆ 4 ԹՂՄ., 21Ծ, 48ԲՆ հասցեում), այսուհետ՝ Վարձակալ, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

Կնքեցինք սույն պայմանագիրը հետևյալի մասին

Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով՝ Վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց Վարձակալին ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ Երևան քաղաքի Արաբկիր համայնքի Վ.Վաղարշյան փողոցի թիվ 12 շենքի շինություն հ. 1 հասցեում գտնվող անշարժ գույքից 42.4 քմ մակերեսով տարածք (հատակագրերը կցվում է) Վարձակալի կանոնադրական խնդիրներից բխող աշխատանքային գործունեության իրականացման համար:

1.2. Վարձատուն վարձակալության հանձնվող Տարածքի սեփականատերն է, ինչը հավաստվում է ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի աշխատակազմի Երևանի տարածքային ստորաբաժանում Արաբկիր սպասարկման թիվ 2 գրասենյակի կողմից 02.04.2016թ. տրված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների թիվ N 02042016-01-0175 պետական գրանցման վկայականի համաձայն:

1.3. Վարձատուն երաշխավորում է, որ Տարածքը վաճառված, գրավ դրված, ենթավարձակալության կամ անհատույց օգտագործման տրված կամ այլ կերպ ծանրաբեռնված չէ, վեճի առարկա չէ, արգելանքի տակ չի գտնվում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Երևան տարածքային ստորաբաժանման թիվ 2 գրասենյակի կողմից 04/06/2019թ.-ին տրված թիվ ՄՏ-04062019-01-0277 միասնական տեղեկանքի:

1.4. Վարձակալության հանձնված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն այլ անձի հիմք չէ սույն պայմանագիրը լուծելու կամ փոփոխելու համար:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

2.1. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված Տարածքը հանձնվել է հանձնման-ընդունման ակտով: Հանձնման-ընդունման ակտը ստորագրվել է Վարձատուի և Վարձակալի կողմից:

2.2. Սույն պայմանագիրը գործում է մինչև երկու հազար տասնինը թվականի դեկտեմբերի քսանհինգը ներառյալ:

2.3. Կողմերը սույն պայմանագրի գործողությունը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով տարածում են մինչև սույն պայմանագրի կնքումը Կողմերի միջև 2019 թվականի մայիսի 1-ից ծագած հարաբերությունների նկատմամբ:

3. ՎԱՐՁԱՎՃԱՐԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ



3.1. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված Տարածքի ամսական վարձավճարը կազմում է 75 000 (յոթանասուևհինգ հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր հարկերը:

3.2. Սույն պայմանագրի 3.1 կետում նշված գումարը՝ Վարձակալը Վարձատուին է վճարում ամսական կտրվածքով՝ մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 20-ը, իսկ դեկտեմբեր ամսվա համար՝ մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

3.3. Վարձակալը վարձավճարը վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վարձատուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է Կողմերի կողմից ստորագրված հանձման-ընդունման արձանագրության և էլեկտրոնային համակարգով դուրս գրված հաշվարկային փաստաթղթի հիման վրա:

4. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1 Վարձատուն պարտավոր է՝

4.1.1. Վարձակալին նախազգուշացնել սույն պայմանագրի 1.1 կետում նշված Տարածքի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների մասին,

4.1.2. Վարձակալած Տարածքում ապահովել կոմունալ համակարգերի անխափանությունը, իսկ իր մեղքով առաջացած թերությունների դեպքում, վերացնել դրանք:

4.1.3. Ոչ ուշ, քան երեք ամիս առաջ, Վարձակալին գրավոր տեղեկացնել Տարածքն ազատելու անհրաժեշտության մասին:

4.2. Վարձատուն իրավունք ունի՝

4.2.1. Վաղաժամկետ լուծել պայմանագիրը, եթե Վարձակալն էականորեն վատթարացրել է Տարածքի վիճակը, սույն պայմանագրի 3-րդ կետով նախատեսված կարգով, չափով և ժամկետներում չի վճարել վարձավճարը:

4.2.2. Վարձատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծել Վարձակալության պայմանագիրը՝ երեք ամիս առաջ գրավոր նախազգուշացնելով Վարձակալին:

4.3 Վարձակալը պարտավոր է՝

4.3.1. Ժամանակին վճարել Տարածքն օգտագործելու համար պայմանագրով նախատեսված վարձավճարը:

4.3.2. Ապահովել Տարածքի ինժեներական ցանցերի, հաղորդակցության ուղիների և սարքավորումների պահպանվածությունը:

4.4 Վարձակալը իրավունք ունի՝

4.4.1. Եթե Վարձատուն Վարձակալին հանձնել է սույն պայմանագրի 1.1 կետին չհամապատասխանող Տարածք, պահանջել հանձնելու համապատասխան Տարածք կամ հրաժարվել հանձնված Տարածքից, իսկ եթե Տարածքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը,

4.4.2. Տարածքը հանձնել ենթավարձակալության միայն Վարձատուի գրավոր համաձայնության դեպքում.

4.4.3. Վարձատուից պահանջել՝ իրեն տրամադրելու Տարածքին վերաբերող փաստաթղթերը:

4.4.4. Վարձակալը իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծելու վարձակալության պայմանագիրը՝ երեք ամիս առաջ գրավոր նախազգուշացնելով Վարձատուին:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Վարձատուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 3.1 կետում նախատեսված գումարի 0,5% (զրո ամբողջ հինգ տասնորդական տոկոս)-ի չափով:

5.2. Սույն պայմանագրով նախատեսված Տարածքի հանձման ժամկետը խախտելու դեպքում Վարձակալն իրավունք ունի Վարձատուին ներկայացված գրավոր ծանուցմամբ պահանջելու վճարել յուրաքանչյուր ուշացված օրվա համար տույժ՝ պայմանագրի գնի 0.05% (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական տոկոս)-ի չափով:

5.3. Սույն պայմանագրով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Վարձատուին վճարման ենթակա գումարներից:

5.4. Վարձակալի կողմից սույն պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Վարձատուն իրավունք ունի Վարձակալին ներկայացված գրավոր ծանուցմամբ պահանջելու վճարել յուրաքանչյուր ուշացված օրվա համար տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05% (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական տոկոս)-ի չափով:

5.5. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ

օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.6. Տույժերի և/կամ տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

5.7. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով հսկողության և/կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ Վարձատուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, Վարձակալը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Կողմերը չեն կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով մյուս Կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման, քաղաքացիներին մատուցվող ծառայությունների որակի ապահովման ու արդյունավետության բարձրացման նպատակով՝ սոցիալական ծառայություններ տրամադրող կառույցները, ինչպես նաև նոր ստեղծվող միասնական ընդունարանները, պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող շենքերում և շինություններում տեղակայելու ուղղված միջոցառումների արդյունքում Վարձակալության պայմանագրով վարձակալության հանձնված Տարածքում աշխատանքային գործունեություն իրականացնող Ծառայության աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների այլ տարածք տեղակայման դեպքում, պայմանագիրը ենթակա է վաղաժամկետ լուծման՝ ցանկացած ժամանակ:

7. ԱՆՀԱՂԱԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱՁԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթանկելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

8. ԵՆԴՐՓՈՎԿԻՉ ԴՈՒՅԹՆԵՐ

8.1. Սույն պայմանագրի շրջանակներում ցանկացած ծանուցումները և փաստաթղթերի հանձնումը կարող է կատարվել Կողմերի ընտրությամբ առձեռն հանձնելու կամ փոստային ծառայության միջոցով սույն պայմանագրով սահմանված հասցեին պատվիրված նամակ ուղարկելու միջոցով: Ընդ որում, եթե փաստաթղթի հանձնումը կատարվել է փոստային ծառայության միջոցով՝ սույն պայմանագրով Կողմին հայտնի վերջին հասցեին, այն համարվում է ստացված, իսկ ծանուցման պարտավորությունը՝ պատշաճ կատարված, դրա ուղարկման օրվանից 7-րդ աշխատանքային օրը՝ անկախ դրա փաստացի ստացման հանգամանքից:

8.2. Սույն պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից ծագող իրավունքները՝ պետական գրանցման:

8.3. Սույն պայմանագրում կատարված փոփոխությունները և լրացումները օրինական են միայն այն դեպքում, եթե դրանք կատարված են գրավոր, վավերացված են նոտարի կողմից և գրանցված են Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանում կողմից:


8.4. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, չորս օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Մեկ օրինակը պահվում է համապատասխան նոտարական տարածքի նոտարական գործում, յուրաքանչյուր Կողմին տրվում է պայմանագրի մեկական օրինակ, իսկ մյուս օրինակը տրվում է Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանում ներկայացնելու համար:

8.5. Նոտարի ներկայությամբ պայմանագիրը ստորագրող Կողմերը հայտարարեցին, որ իրենք գործունակ են, ամբողջովին գիտակցում և հասկանում են պայմանագրով նախատեսված բոլոր կետերի իմաստը և նշանակությունը, ինչպես նաև հայտարարում են, որ պայմանագիրը ստորագրում են կամավոր և իրենց համար ձեռնադրելով պայմաններով:

8.6. Պայմանագրով նախատեսված Կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է այդ գործարքի՝ լիազորված մարմնի՝ ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության, կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.7. Սույն պայմանագրի օրինակների միջև հակասություն առաջանալու դեպքում նախապատվությունը տրվում է նոտարական գրասենյակում պահվող օրինակին:

3-11-



95
I
E
R
I
T
R
F
15
2

ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱԿՏ

07/06/2019թ.

Բ. Երևան

Մենք՝ «ՀԱՅՁՐՆԱԽԱԳԻԾ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲԸ-ն (գրանցման համար՝ 264.120.06268, տրված 30/04/2003թ., գտնվելու վայրը՝ Բ.Երևան, Վ.Վաղարշյան 12), ի դեմս՝ տնօրեն ԱՐՇԱՎԻՐ ՄԱՐՏԻԿԵԱՆԻ, այսուհետ՝ «Հանձնող», ով գործում է Հնկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ Արաբկիրի բաժնի պետ ԱՍԾԱ ԱՇՈՏԻ ԳԵՎՈՐԳԵԱՆԸ (անձնագրային տվյալներ՝ AN0247051, տրված՝ 013-ի կողմից, 07/11/2012թ.-ին, հաշվառված՝ ԵՖԵՎԱՆ, ԴԱՎԹԱՇԵՆ 4 ԹՂՄ., 21Ե, 48ԲՆ հասցեում), այսուհետ՝ «Ստացող», մյուս կողմից, կնքեցինք սույն ակտը հետևյալի մասին.

1. 01/05/2019-ին Հանձնողը հանձնել է, իսկ Ստացողը ստացել Հանձնողի՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Երևան քաղաքի Արաբկիր համայնքի Վ.Վաղարշյան փողոցի թիվ 12 շենքի, շինություն հ. 1 հասցեում գտնվող անշարժ գույքից 42,4 քմ մակերեսով Տարածքը:

2. Սույն համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, հայերեն լեզվով, կնքված է 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է համաձայնագրի մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները և բանկային վավերապայմանները.

ՀԱՆՁՆՈՂ

«ՀԱՅՁՐՆԱԽԱԳԻԾ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲԸ
ՀՎՀՀ 00012859
ՀՀ, Բ. Երևան, Վաղարշյան 12
Էլ. փոստ՝ awd@hjni.am
Հ/Հ 11500 00088680300
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ

ԸՆԴՈՒՆՈՂ

ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության
պետական ծառայության Արաբկիրի բաժին
ՀՎՀՀ 02505511
ՀՀ, Բ.Երևան Նալբանդյան 13
Հ/Հ 900011556355
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն

Տնօրեն՝

